

5.12. 2007թ. դեկտեմբեր ամսվա հիդրոոդերևութաբանական վիճակը Հայաստանում

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկատվության, դեկտեմբերին օդի միջին ամսական ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում եղել է նորմայից 1-1.5 աստիճանով ցածր, առանձին վայրերում՝ 2 աստիճանով:

Միջին տասնօրյակային ջերմաստիճանն առաջին և երրորդ տասնօրյակներում եղել է նորմայից ցածր 1-2 աստիճանով, երկրորդ տասնօրյակում՝ նույնքանով բարձր:

Միջին առավելագույն ջերմաստիճանը Սյունիքի հովիտներում կազմել է +9 +10°C, ՀՀ Տավուշի մարզում՝ +6 +7°C, Արարատյան դաշտավայրում՝ +4 +5°C, Սյունիքի նախալեռներում և ՀՀ Լոռու մարզում՝ +3 +5°C (ք.Գորիսում (ՀՀ Սյունիքի մարզ)՝ +6°C), Լեռնային շրջաններում՝ -2 0°C, ՀՀ Շիրակի մարզում՝ +4 +6°C (Աշոցք գյուղում՝ -6°C):

Ամենաբարձր ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում դիտվել է դեկտեմբերի 11-12-ին և 14-ին: Սյունիքի հովիտներում գրանցվել է +18 +20°C, ՀՀ Տավուշի մարզում, Սյունիքի նախալեռներում՝ +13 +16°C, Արարատյան դաշտավայրում՝ +10 +15°C, ՀՀ Լոռու մարզում՝ +7 +12°C, Լեռնային շրջաններում՝ +4 +7°C:

Միջին նվազագույն ջերմաստիճանը Լեռնային շրջաններում կազմել է -7 -12°C (ք.Սևանում (ՀՀ Գեղարքունիքի մարզ)՝ -6°C, Աշոցք գյուղում՝ -15°C), ՀՀ Լոռու մարզում՝ -5 -9°C, Սյունիքի նախալեռներում՝ -4 -8°C, Արարատյան դաշտավայրում՝ -4 -5°C, ՀՀ Տավուշի մարզում՝ -1 -4°C, Սյունիքի հովիտներում՝ -3 +1°C:

Ամենացածր ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում դիտվել է դեկտեմբերի 26-29-ին և 31-ին: Լեռնային շրջաններում և ՀՀ Լոռու մարզում գրանցվել է -14 -19°C, (ք.Սևանում՝ -6°C, Մասրիկ գյուղում (ՀՀ Արարատի մարզ) և ք.Տաշիրում (ՀՀ Լոռու մարզ)՝ -22°C, Աշոցք գյուղում՝ -32°C), Արարատյան դաշտավայրում և Սյունիքի նախալեռներում՝ -10 -12°C (ք.Սիսիանում (ՀՀ Սյունիքի մարզ)՝ -19°C), ՀՀ Տավուշի մարզում և Սյունիքի հովիտներում՝ -5 -7°C (ք.Դիլիջանում (ՀՀ Տավուշի մարզ)՝ -12°C):

Դեկտեմբեր ամսվա ընթացքում տեղումների քանակը հանրապետության տարածաշրջանների մեծ մասում եղել է նորմայից զգալիորեն պակաս: Արարատյան դաշտավայրում և ՀՀ Տավուշի մարզում այն կազմել է նորմայի 14-30%-ը, ՀՀ Լոռու մարզում և Լեռնային շրջաններում՝ 40-80%, ՀՀ Սյունիքի մարզում՝ 80-110%:

Դեկտեմբերի 2-ին, 7-ին, 15-ին և 19-ին տարածաշրջանների մեծ մասում, 1-ին, 11-ին, 13-ին և 30-31-ին՝ առանձին տարածաշրջաններում, դիտվել է ձյուն:

Դեկտեմբերի 5-ին, 7-8-ին, 10-ին, 15-ին, 20-ին և 22-23-ին ՀՀ Լոռու, Գեղարքունիքի և Շիրակի մարզերում դիտվել է քանու ուժգնացում, արագությունը՝ 12-17 մ/վրկ, պոռթկումները՝ 17-24 մ/վրկ: Արարատյան դաշտավայրում, ՀՀ Շիրակի մարզում, ք.Աշտարակում (ՀՀ Արագածոտնի մարզ), Ուրցածոր գյուղում (ՀՀ Արարատի մարզ) և Պուլիկինի Լեռնանցքում (ՀՀ Լոռու մարզ) առանձին օրեր դիտվել է մառախուղ, տեսանելիությունը՝ 40-500 մ: Դեկտեմբերի 18-ին և 23-ին Աշոցք գյուղում դիտվել է գետնաբուք, արագությունը՝ 6-12 մ/վրկ, պոռթկումները՝ 8-14 մ/վրկ:

Ձյան ծածկույթի բարձրությունը դեկտեմբերի 31-ի դրությամբ Արագածի Լեռնանցքում կազմել է 185 սմ, Լեռնային առանձին շրջաններում՝ 10-22 սմ (ք.Ջերմուկում (ՀՀ Վայոց ձորի մարզ)՝ 35 սմ, Աշոցք գյուղում՝ 30 սմ), ՀՀ Լոռու մարզում և Սյունիքի նախալեռներում՝ 1-7 սմ, մնացած տարածաշրջաններում ձյան ծածկույթը բացակայել է:

Դեկտեմբեր ամսվա ընթացքում հանրապետության Լեռնային շրջաններում ձնածածկույթի բարձրությունը կազմել է 6-20 սմ, մնացած տարածաշրջաններում այն բացակայել է, երրորդ տասնօրյակում ձնածածկ առաջացել է նաև ՀՀ Լոռու մարզում՝ 2-7 սմ:

Դեկտեմբերին հանրապետության գետերի մեծ մասում միջին ամսական ելքերը կազմել են նորմաների 120-130%-ը:

Սևանա լճի մակարդակը դեկտեմբեր ամսվա ընթացքում իջել է 2 սմ-ով և 2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել 1898.79 մ, որը 2006թ. նույն օրվա համեմատ բարձր է 55 սմ-ով: